

# ԿՐՕՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻ ՆՈՐՕՐԻՆԱԿ  
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՆԿՐՏՈՒՄՆ.

Մինչ Հայոց Ազգի և Եկեղեցւոյներկայ վիճակի մէջ՝ ոչ միայն ըստ սեպուհ պահանջմանց պարտուցն և պաշտամանց անձնիւր Եկեղեցական Պաշտօնէից, այլ նա և ըստ անհրաժեշտ պիտոյից և ստիպմանց ժամանակակից ինչ ինչ հանդամանաց՝ զգալի իմն մեծ կարօտութիւն կրտիրէ՝ և թէ եկեղեցական Աւարչութեան և թէ ժողովրդեան կողմանէ բաւական և անխոնջ ջանքեր կգործադրուին իջնեալ և արժանաւոր եկեղեցականներ պատրաստել և ունենալոյ համար, և որքան միջոցներն՝ մանաւանդ զբամականն՝ կնքեն՝ հետզհետէ յառաջադէմ կարգիւնաւորուի իջնեալ եկեղեցականներ պատրաստելոյ հանրաբաղձալի նպատակը, մի և նոյն ժամանակ ուրիշալ մի իժնեալ<sup>1)</sup> զաղանապոյի կրկնութիւն Հայոց մէջ, և եկեղեցականաց բարեկարգութեանց և արդիւնաւորութեանց և ին նախանձախնդիր լինել պատրուակելով՝ եկեղեցականաց նկատմամբ զանազան անպատեհ և գայթակղեցուցիչ լուրեր կհրատարակէ, առանց մասնաւոր անձանց պակասութիւնքը դատափետելոյ և նոցա նկատմամբ կարծիք և դիտողութիւն յայտնելոյ՝ ընդհանրապէս պախտրակելով կվատահամբաւէ, և ի մի բան՝

(1) Ակամայ և ցաւ ի սիրտ կտամք այս անուշոյ միանգամայն յանչափս կիշտանամք՝ զի ոմանք հակառակութեամբ, և այլք անփորձութեամբ՝ կամ վարձեալ լինելով՝ զուցէ ակամայ ընկերացած են այս խմբակի հետ:

եկեղեցականաց ազղեցութիւնը ջնջել կը ջանայ: Տակաւին այսքանով ևս չբաւականանալով՝ օտարոտի և քմահաճոյ առաջարկութիւններ կտեղայ՝ կարծելով թէ՛ մի մեծ և օգտաւէտ պաշտօն կրկատարէ՝ առանց երբէք խելամուտ լինելոյ ժամանակակից և շրջապատող հանդամանաց, և միշտ գահավէժ յանդգնութեամբ և ձեռներեցութեամբ գայթակղեցուցիչ խնդիրներ կյուզէ՝ և ինքնին պարզած և լուծած կերազէ:

Անշուշտ ողջամիտ Ազգայինք քաջ կը նկատեն և ցաւ ի սիրտ կափսոսան յիշեալ խմբակի վերայ, որ կենսական և ազգօգուտ խնդիրները չիմանալով կամ կամայ թողլով՝ նենդամիտ և վտանգաբեր մի ընթացք բռնած է, և օտարոտի խնդիրներ կշարժէ և ո՞ գիտէ՞ յորո՞ց հրահանգեալ և թելադրեալ, և բազմոց քաջայայտ է սեղմեալ . . . վիճակի մէջ իբրև մենաշնորհ՝ այսպիսի խնդրոց համար եղած ուշադրութիւնը և նորօրինակ ազատութիւնը՝ որ բաւական ժամանակէ հետէ սկսած է, որով զողջիս Ս. Գրոց հետեւեալ խօսքը ի ժամանակիս ևս ասել իրաւացի կլինի՝ զի Ժամանակս լաւ է:

Թէև խոհեմութեան նպատաւոր պահանջն է ի ժամանակիս միշտ լուրիւնը սիրել, սակայն երբեմն կը պատահին այնպիսի պարագաներ՝ յորս կընշմարուին ոմանց ակամայ կամ միամտաբար խաբուիլը, վասն որոյ պէտք կլինի մերթ ընդ մերթ լուրթիւնը խզել և միամտաց ամբոխետլ մրաքերը պարզել:

Քահանայից և կուսակրօն եկեղեցականաց համար յուզած խնդիրքն ակնար-

կեալ խնդիրներէ են, որոց նկատմամբ թող  
ներուի մի անսութիւն անել :

Մեր Ազեղեցւոյ և Ազգի վիճակ՝ կա-  
րելի եղած և ունեցած ինչնս-րոյն Արօնա-  
կան Աւարչու-Մեան մէջ՝ զլեւաւորապէս կրօ-  
նական և բարոյական է և ըստ այնմ կը կա-  
ռավարուի: Քաղաքական ներքին անկախ  
և աջակից ոյժն ի բազմաց հետէ չկայ:  
Ազգային կապն քաղաքական մի հզօր մաս-  
նէն զբեռած է, միանգամայն Ազգն մի  
քանի իշխանութեանց և Պետութեանց  
ներքեւ ցրուած կը կառավարուի, և ընդ  
Ազգայնոյն՝ զանազան օտար հանգամանաց  
ազդեցութիւնքը կը կրէ և կապրի: Բայց  
և այնպէս՝ ունի մի զլեւաւոր և նուիրա-  
կան Աեդրոն, յորում Արօնական Աուիրա-  
պետութեան ընդ հովանեաւ՝ կպահէ և  
կպաշտպանէ իւր Ազգութիւնը և Ս. Արօ-  
նը: — Թէպէտ կան ակեր՝ յորս Հայոց  
Ազգութիւնը չկամին ճանաչել, և Պեր-  
մանական ազգութեան Հոովմէական կը-  
րօնին ներքեւ բռնած զիրքը ըմբռնելով՝  
ըստ ազգութեան և ըստ կրօնի տարբեր  
տարբեր գաղափար ունին և կը տքնին նոյն-  
պէս համոզել, մինչդեռ Հայաստանեայց  
Ազեղեցի և Հայոց Ազգ՝ ինքնուրոյն և  
անկախ Աւարչութեամբն՝ միմեանց յատուկ  
և սեփհական լինելով՝ տարբեր ենթազ-  
րութիւնները և ըմբռնումները որքա՞ն  
սխալ և անպատշաճ են, սակայն ՀԱՅ ա-  
նուամբ առանձին մի ԱԶԳԻ՝ կամ ասենք  
ցեղի՝ այսօր ի գոյութեան լինելը անուբա-  
նալի է, որ և առանձին իւր Աւաքելական  
Ազեղեցին ունի, այլք ի՞նչ անուն կամին՝  
թող տան, բաւական է որ նոցա նորահը-  
նար գաղափար և նպատակները քաջ ճա-  
նաչուին՝ և իմացուին միշտ զգուշանալով :

Երբ այսպէս է Հայոց Ազգի և Ազե-  
ղեցւոյ դիրք՝ և Ազեղեցական Աւարչու-  
թեան վերայ բեռնաւորեալ են մի Ազգի  
և Ազեղեցւոյ գոյութիւնը և յարատե ա-  
պահովութիւնը պահպանելոյ և կառա-  
վարելոյ պարտաւորութիւնք, և իւր սո-  
րա իշխանութեան ուժն զլեւաւորապէս  
կրօնական և բարոյական է՝ թէպէտ Քա-  
ղաքականէն ևս ճանչցուած է կանոնադ-  
րեալ արածութեամբք և իրաւասու-  
թեամբք, ողջամիտ Հայոց դիւրին է մա-  
կաբերել և կռուել Հայոց Ազեղեցական  
Պաշտօնէից վսեմ զրից և մեծ նշանակու-  
թեան հետ՝ նոցա նկատմամբ Ազգի կող-  
մանէ հանապազ հարկան հրաժեշտ եղած  
և բռնուելք ընթացքը՝ պատկառելի  
ակնածող սէրը և ջերմեանդ պաշտպա-  
նութիւնը: Արով ինչպէս մի անհատ՝ իւր  
կազմուածքի գերագոյն մասը և ղեկավա-  
րը սիրելով և պաշտպանելով՝ միանգա-  
մայն իւր անձի գոյութիւնը կապահովէ,  
սոյնպէս մի Ազգ և Ազեղեցի ճանաչելով՝  
յարգելով և սիրելով իւր Աեդրոնը և  
Պաշտօնեայքը՝ իմա Ազեղեցական Աուի-  
րապետութիւնը՝ Պաշտօնէութիւնը և  
Աւարչութիւնը՝ անշուշտ կապահովէ և  
կապահովէ իւր գոյութիւնը: Իսկ անար-  
գելով և առաթուր հարկանելով՝ ո՞չ ա-  
պօքէն ինքզինքն կանարգէ և անձնասպան  
կամ ազգասպան կլինի :

Այսու ամենայնիւ՝ ինչպէս ամեն ան-  
հատ, ամեն ընկերութիւն և վարչութիւն՝  
պակասութիւններէ և սխալներէ ազատ  
չեն և մեալ չկարեն, և իրբեմն զեղծում-  
ներ ևս կուեննան, սոյնպէս Հայոց եկե-  
ղեցական պաշտօնէութեան անդամք ևս՝

ի ներկայս պակասութիւններէ զերծ չին<sup>2</sup>), — թէպէտ համեմատելով ընդ այլոց՝ մերայնոցն ամենաթեթեւ բաներեն, — սակայն ինչ որ պակասութիւն ունենան Պաշտօնէութեան անդամք՝ ինչպէս նաև ամբողջ Ազգն, անշո՛շտ երկուքն և սփմեանց պատասխանատու և միմեանց դէմ մեղապարտ են, որք միշտ պարտաւոր են միմեանց ամենակերպ կարօտութիւնքը և պակասութիւնքը անհնար և անկրկնելի:

(2) Արդէն մեր Եկեղեցական Աւարչութիւն Եկեղեցականաց բարեկարգութեանց համար և սուրբագար կհոգայ ինչ որ արժան է և ամեն կարելի միջոցներ ձեռք առած զուն կգործէ և յառաջ կտանի այս նպատակը. մի և նոյն ժամանակ՝ ոչք որ չափը կանցնեն և անդիլջ կմնան և ուղղութեան գալոյ յոյս չեն տար, կարգալոյժ կլինին և կարտաքսուին՝ ինչպէս որ քանի քանի օրինակներ տեսնուեցան:

Ա. Ե. Հայրապետ անքան հետամուտ և նախանձախնդիր եղած և է այս նպատակի մէջ և տ որ Սինօզի միջոցաւ շարունակ պէտք եղած անօրէնութիւնքը կկարգադրէ և յանցելումն մի պատեհատութիւ մի և նոյնը գրեց և պատուիրեց Վ. Պօլսոյ Հայոց Ս. Պատրիարք Գեոր Ը. Ներսէս Արքեպիսկոպոսին:

Ահա ասիկ յիշեալ գրութենէ կարևոր եղած պարբերութիւնը կհրատարակեմք:

« . . . Բայց ի միտ առեալ զկանոնս Եկեղեցւոյ՝ համողեալ ենք, թէ որք յանցաւոր են, պարտին նախ ննմարկիլ ընդ անաչառ եւ օրինաւոր դատաստանաւ, յառաջին եւ յերկրորդ նուազս եթէ հողեւոր իշխանութիւնն ներողամտութեամբ վարեացի ընդ այնպիսիս՝ խրատելով եւ յանդիմանելով, իսկ յանաստ եւ յանդիլջ մնալն նոցա ի չարիս, արժան է խստութեամբ վարիլ, եւ ի վերջոյ լուծանել զայնպիսիս ի կարգացն, զբանանայ եւն այդր ի Պատրիարքարանի, եւ զեպիսկոպոսունս աստ ի Ս. Էջմիածին, որով մտքընցի անշո՛շտ Ս. Եկեղեցի մեր ի չար մշակաց անախ եւ ի զայնակոյնցոցիչ պաշտօնէից»: (Օգոստ. 4, 1874, Թ. 529):

Թիւնքը տեսնել, լրացնել և կամ ուղղելոյ միջոցները հոգալ և գործադրել:

Բայց սակայն միմեանց պակասութիւնքը լրացնելը կամ ուղղելը ի՞նչպէս պիտի հասկացուի:

Չմիմեանս վատահամբաւելով և խայտառակելով, կամ թէ բարոյապէս սպանանելով:

Այսպիսի մի ընթացք բնութեան ևս ընդդէմ չէ:

Ո՞վ է այն՝ որ իւր մարմնոյ վերայ տեսած վէրքը՝ փոխանակ ինամելոյ և սիրով դարմանելոյ՝ անարգելով և վէրքը աւելի բանալով բուժել տայ: Ահ եթէ վէրքը պատճասելով՝ իւր մարմնոյն մի մասը կանարգէ և կխայտառակէ՝ զո՞վ կարհամարհէ, և ո՞ւմ է վնասն և նախատինքն:

— Եթէ ոչ համանդամայն մարմնոյն. չէ որ ըստ առաքելոյն, եթէ վշտանայ մի անդամն՝ վշտանան ամենայն անդամքն ընդ նմա, եթէ վատաւորի՝ վատաւորին ամենայն անդամքն ընդ նմա, և ին:

Այսպէս պիտի իմանամք մեր Ազգի կամ Եկեղեցւոյ և իւր հարազատ Պետ և կառավարիչ զանուած Պաշտօնէութեան համար ևս:

Ապաքէն պակասութիւնքը ծածկել կամ բարեկարգելոյ և ուղղելոյ չհետեւիլն՝ կատարեալ անխոհմութիւն և թշնամութիւն է Եկեղեցւոյ դէմ: Այնպէս հրապարակագոյժ խայտառակել և յանիրաւի վատահամբաւելն՝ կատարեալ անխոհմութիւն և թշնամութիւն է ընդ դէմ Մարմնոյն Քրիստոսի:

Ուրեմն ի՞նչ պէտք է անել:

Ահա ասիկ:

— Միրով և քաղցրութեամբ իմանալ կամ իմացնել, և ի միասին ջանալ արժանաւոր դարմանը հոգալով :

Ահա միշտ այսպէս եղած է և պիտի լինի մեր Ակեղեցւոյ և Ակեղեցական Ղարչութեան ընթացքը, զայս մանաւանդ ի ներկայ ժամանակիս մեծաւ ուշադրութեամբ պէտք է կատարել՝ քաջ գիտնալով որ՝ ընդ միմեանս խռովութիւն յարուցանելով, անպատեհ ընթացիւք զմիմեանս պախարակելով և խայտառակելով, միմեանց դէմ որոգայթներ լարելով՝ և ըն, միամիտ ժողովուրդն կղայթակզել, կխրտնի և կսառնանայ . . . որով միայն օտարն հոգին եղ կըստի:

Այսպիսի հակիրճ տեսութենէ պէտք է հետեւցնել, զի այս ամենը ի նկատի ունենալով՝ անհրաժեշտ է միշտ քաջ կշռել և այնպէս խօսել եկեղեցական պաշտօնէից նկատմամբ օտարոտի և անպատեհ նոր խնդիրներ յարուցանելէ, պէտք է նկատել օտարին քաղաքական և կրօնական դիրքը և հանգամանքները, և դահալէժ նոցա նրմանելոյ կապկուծենէն պիտի հեռանալ:

Արբ օտարն քաղաքական անկախ և հզոր դիրք ունի, նմա ներելի կլինի կամեցած խնդիրները յուզել, և ընդ կրօնականին ընդհարուել, նախամեծար իրաւասութեան և գերիշխանութեան նախանձներով փորձուիլ, և ըն և ըն, և որն ևս յազթօղ հանդիսանայ՝ մինն կամ միւսն կպաշտպանէ զիւր Ազգ և Ակեղեցի: Այոց նկատմամբ այսպիսի՝ փորձեր ի՞նչ օգուտ կբերեն կամ կարեն, չէ՞ որ՝ այսպիսի՝ ժամանակի մէջ օտարին յուզած խնդիրները մեզ ևս ուղղուած են և վտանգներ կապառնան, և երբ օտարն

ըն իւր օգտին համար ամեն միջոց կգործածէ, չէ՞ որ մեք այսպիսի տարապարտ խնդիրներ յուզելով՝ ինքնին կըզլտորւիմք նոցա թակարդից մէջ:

Ղերե օտարոտի և վնասակար ընթացից վերայ ակնարկելով՝ յանուանէ յիշուեցան քահանայից և կուսակրօն պաշտօնէից համար յուզուած խնդիրքն, զորս իբրի օրինակ մէջ բերելով պէտք է տեսնել՝ թէ ի՞նչ օգուտ կայ կամ կը յառաջանան նորօրինակ այսպիսի խնդիրներ յուզելէ, և թէ առաջարկուած կամ յեղափոխել նկատուած ձեւն ձեռնառնէ է աշխատանքայց Ակեղեցւոյ:

Այսատանկայց Ակեղեցին՝ առաջին դարերէ սկսեալ առաքելական քարոզութիւններէ և սահմանադրութիւններէ ուսանելով՝ շատ զեղիցիկ կարգադրած է Ակեղեցւոյ պաշտօնէութիւնը կուսակրօն և ամուսնացեալ անձինքներէ բաղկացնել Առավարչական և Վասնայական պաշտօնակատարութեանց համար: Աստ որում Վանին քարոզութիւնը ամեն տեղ շրջելով՝ արձակ համարձակ քարոզելոյ և ուսուցանելոյ՝ և Ակեղեցւոյ պաշտպանութիւնը և կառավարութիւնը արթնութեամբ և քաջութեամբ կատարելոյ համար կուսակրօն Ակեղեցականաց պէտքը Վրիստոնէական Ակեղեցին ի սկզբան ըզգաց և ունեցաւ՝ զուցէ հին եկեղեցիէն փորձը աւնլով, մինչդեռ նորահաստատ Վրիստոսական Ակեղեցւոյ մէջ անմիջապէս կուսակրօն եկեղեցականաց դաս կանոնաւորապէս հաստատելն անգամ չասեմ անկարելի՝ բայց շատ դժուար էր՝ և այս այնպիսի ազգաց մէջ՝ որք մի կինով չէին բաւականանար, կամ թէ

Մովսիսական կնաթողութեան (ապա-  
հարզանի) օրէնքը ունէին և ի տարւոջ  
կարող էին մինը թողուլ և զայլ ոմն առ-  
նուլ ի կնութիւն, որպիսեաց համար ա-  
ռաքելական Ալեգիցին հազիւ մի կին ու-  
նենալոյ հրաման տուաւ՝ միանգամայն ծա-  
նրը պայմաններով սահմանափակելով  
(Մ. Տիմ. Գ. 2-13), և պարզ ասաց,  
«Օ, ի որ անկինն է՝ հոգայ զՏեառն, թէ  
որպէս հաճոյ լիցի Տեառն, և որ կանամ-  
բին է՝ հոգայ զաշխարհիս, թէ որպէս հա-  
ճոյ լիցի կնոջ իւրում», որոյ վասն մեր  
Փրկիչ Քրիստոս հետեւեալ խօսքը ասե-  
լով, թէ՛ «Ան ներքինիք՝ որք զանձինս  
իւրեանց արարին ներքինիս վասն Արքա-  
յութեան երկնից», յաւելցուց սա ևս,  
թէ՛ «Որ կարողն է տանել՝ տարցի»,  
(Մատթ. Ժ. Թ. 12, և ըն.)։ Նոյն իսկ  
Պօղոս առաքեալ օրինակաւ անձին յոր-  
դոր կտայ Աստուծոյ բանին քարոզաց՝  
զի ամեն մարդ իբրև զինքն (անկին պաշ-  
տօնեայ) լինի, «Աամիմ, զի ամենայն մարդ  
լինէր իբրև զիս», դարձեալ թէ՛ «Ա-  
մուրեացն և այրեացն ասեմ, լաւ է նոցա  
թէ կոյցեն իբրև զի», և ըն. (Մ. Աորնթ.  
Լ. 6, 8)։ Իսկ ժողովրդեան հոգևոր պէտ-  
քերը կատարելոյ և մշտապէս մտիթա-  
րութիւնները մատակարարելոյ համար ևս  
ամուսնացեալ քահանայից դասը կարգեց,  
որք ընտանեաց տէր լինելով՝ միանգա-  
մայն կհասկանան ընտանեկան կապակցու-  
թիւնքը և կարօտութիւնքը և ըստ այնմ  
կներգործեն ժողովրդեան մէջ, և ամեն  
կարգի՝ աստիճանի և հասակի մարդկանց  
հետ վտահ յարաբերութիւն կարեն ու-  
նենալ և ի հարկին նպաստել ըստ կարե-  
ւորութեանն. սակայն ինչպէս ամենայն

կանամբի անձն՝ նոյնպէս ամուսնացեալ  
քահանայք ընտանեաց տէր լինելով՝ ինչ-  
պէս կարելի է և որքան դժուար՝ գուցէ  
շատ անգամ ևս անկարելի՛ ի պահանջել  
հարկին՝ կամ Աւետարանի քարոզութեան  
համար և կամ այլ անհրաժեշտ պար-  
տաւորութեամբք և պաշտօններով՝ ա-  
նակրնկալ ժամանակի մէջ՝ անմիջապէս  
մերձաւորագոյն ընտանիքը թողուլ և եր-  
թալ այլուրեք և այլոց համար աշխատին՝  
մինչ նոքա պարտաւոր են ընտանեաց մօտ  
մնալ և նոցա վերայ ևս խնամք տանել,  
որպէս զի ազատ մնան Ս. Գրոց այս դա-  
տապարտութիւնէն, թէ՛ «Ոք իւրոց, մա-  
նաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի,  
ի հաւատոցն ուրացեալ է, և չար ևս քան  
զանհաւատն է», (Մ. Տիմ. Լ. 8)։ Աւ-  
սա անուրանալի ճշմարտութիւն է, զի մի  
անձն երբ իւր մերձաւոր ընտանեաց խն-  
ամք չկարողանայ տանել, հապա հեռա-  
ւորաց վերայ ինչպէս կտանի։ Թողումք  
յիշել՝ զի ընտանիք ունեցողներու հա-  
մար պաշտօններով տեղափոխուելոյ մէջ  
որքան դժուարութիւնք և ծանրութիւնք  
կան, մեծ ծախուց պէտք կլինին, ընտա-  
նեկան արգիլքներ անպակաս կյառաջա-  
նան։ Նոյնպէս ընտանեաց վերայ խնամք  
տանելոյ համար դրամական մեծ կարօ-  
տութիւնքը, և եթէ անկար վիճակի մէջ  
տոգորուին՝ ապրուստը հայթայթելոյ և  
հարկ եղած կենցաղավարութիւնը պահ-  
պանելոյ համար սորա և նորա ձեռացներ-  
քեւ իբրև գերի մաշուիլը, գուցէ ակամայ՝  
իւրեանց համոզմանց և զգացմանց հա-  
կառակ՝ կամատար լինելոյ ենթարկուելի-  
քը, վասն զի կանամբի լինելով՝ աւելի  
պիտի հոգան զկնոջէն (Մ. Աորնթ. Լ. 6)

5 - 35) քան թէ իւրեանց պաշտօնից համար:

Ուշադիր ընթերցողն Հայաստանեայց Ափեղեցւոյ պատմութենէն ևս շատ լաւ կարող է քաղել այս ամեն պարագաները, և ինչո՞ւ համառօտ չասել, որ գործնական օրինակներն թող ապացոյց լինին և հաստատեն այս ամենը: Այսին զի Հայաստանեայց Ափեղեցւոյ երկրորդ լուսաւորիչ Ս. Գրիգոր Պարթև՝ ինչպէս Ազատան գեղոս կպատմազրէ՝ գործնականով կցուցանէ մեզ՝ երբ կուսակրօն և ամուսնացեալ եկեղեցականքը աւելի պարզ սահմանեց և նոցա պարտաւորութիւնք որոշեց, միանգամայն երբ ինքն Հայաստանեայց Ափեղեցւոյ Հովուապետութեան հրաւիրուեցաւ, արդէն հրաժարեալ էր իւր ընտանիքէն՝ որ - կինն - կուսանաց միվանք գնաց ձգնելոյ, այսպէս վարուեցան նորա որդիք և թոռներն, Սեծն Արսէս, Սահակ, երեւելի Խոսրով եպիսկոպոսն Անձեացեաց, Ահարամ-Գրիգոր Ա կայսերն և այլք, յորմէ կհասկացուի և այս՝ զի Հայաստանեայց Ափեղեցւոյ մէջ երբ առաքինութեամբք և բարի բարուք և քաջուսումն հռչակուած մի անձն՝ Ափեղեցական վսեմ պաշտօնի արժանի կդատուէր և կրկոչուէր, նախ իւր ընտանիքէն կհրաժարուէր՝ եթէ կենդանի էր, որ և մի կուսաստան կառանձնանայր: — Այժմ ևս կշարունակուի այս, և միանգամ ամուսնացած մի մարդ՝ եթէ ընտանիքը վախճանի, կարող է եկեղեցական դառնալ

և մինչև Ապիսկոպոսութեան բարձր աստիճանին հասանիլ, և ինչ(4):

Արդ՝ նոքա՝ որ նախկին պարզութիւն և զրելով՝ կուսակրօն եկեղեցականութեան համար նոր խնդիր կյարուցանեն, նոքա՝ որ կուսակրօն եկեղեցականութիւնը ըստորնացնել և սեղմեալ վիճակի մէջ տեսնել կբաղձան, օտար օրէնքներ կերազեն, նոքա՝ որք կուսակրօն և համայն եկեղեցականութեան աւելի մեր Ազգի համար թէ կրօնական և թէ աղբային նշանակութիւնքը և պէտքը չզրտեն և մեղապարտ ընթացքով նորա դէմ կխիզախեն, վերջապէս նոքա՝ որ Հայոց Ափեղեցական Պաշտօնէութեան դէմ զինեալ են և կերազեն մի դահալէժ և Ափեղեցւոյ ներհակ յեղափոխութիւն տալ(5), երբէք չունենալով մի ուրիշ ապաւէն և յոյս՝ որոյ վերայ Ազգի և Ափեղեցւոյ գոյութիւնը սեփական ինքնուրոյնութեան մէջ ապահո-

(4) Ներելի չէ կասկածել՝ թէ կան մի քանի անձինք և կամելով իրրու ուսումնականք եկեղեցական լինել և բարձր պաշտօնից հասանիլ, սակայն իւրեանց բուռն . . . կրից յաղթել չկարողանալով՝ զի կուսակրօն եկեղեցական պաշտօնեայ լինին և տանին այն ծանր և քաղցր լուծը ևս տքնելով իւրեանց նպատակը յառաջ վարել՝ կջանան Եկեղեցւոյ կուսակրօնից համար սահմանած նուիրական կանոնքը խախտել՝ եթէ ոչ իսպառ՝ զէթ գայթակղեցուցանելով զպարզամիտս:

(5) Զարմանալի է ոմանց այն ջանքը ևս, որ Քահանայից ոռճիկ յատկացնել կառաջարկեն, մինչդեռ մեր Ազգի հանգամանաց նայելով՝ այնպիսի մի սովորութիւն սահմանել խիստ դժուար է, և ի՞նչ ապահով երաշխաւորութիւն կայ այն նպատակի հասանելոյ հարկ եղած տուրքը անընդհատ ի ժողովրդենէ ստանալոյ, թող որ Առաքելական Եկեղեցին ոռճիկ չէ սահմանած հոգևոր

(3) Խորեն. զիրք Բ. զԼ. 2.

վին, թող ինքնին կշռեն իւրեանց ընթացքը և ջանքերը թէ օգտաւէ՞տ՝ եթէ վտանգաբեր են, և արժանաւոր դատապարտութիւնը ընդունին:

Արդ այսքանը բաւական է եզրակացնելոյ համար թէ՛ մեր Ակեղեցւոյ Պաշտօնէութեան և Աւարչական ներկայ վիճակ շատ լաւ և յարմարագոյն է Հայոց ամեն ժամանակուայ դրութեան, և եթէ կան մեզ համար անհրաժեշտ և ձեռնառու պէտքեր՝ եկեղեցական պաշտօնէութիւնը և ժողովրդեան հարազատ օգուտը՝ կարօտութիւնքը և յառաջադէմ պայծառանալոյ պահանջները լռիկ մնջիկ՝ և յարատեւ սիրով և ջանքով գիտնալոյ և կատարելոյ մէջ են և պիտի լինին, որ զլսաւորապէս ամեն կարգի և աստիճանի ազգայինքը՝ բարոյական և մտաւորական ան-

պաշտօնէին: Իսկ եթէ կարելի լինի այնպիսի մի սովորութիւն հաստատել, յայնժամ՝ Քահանայից մէջ հետզհետէ կատարեալ անտարբերութիւն և թուլութիւն կրտիրէ, և իւրեանց ոռճիկները բտանալով՝ ժողովրդեան հոգեոր պէտքերն բարձի թողի կմնան ելն և լին. միանգամայն Ակեղեցական Աւրչութեան մէջ դատաստանական և պատժական մի կնճառոտ գործ ևս կյաւելանայ և կշարունակուի:

Բանիմաց անձինք և ծերունիք կարող են մեր ասածին շուտ համոզուիլ, քանզի նոքա տեսած են ժամանակաւ Ակեղեցւոյ բարձր . . . դասու առանց ոռճիկ լինելը, զոր և կարող են բաղդատել այժմեան ոռճկաւորաց զործոց և ջանից հետ:

Ընդհանուր հայեացքով՝ կամաւոր նուէրքն ժողովրդեան համար ծանր չէ, որով թէ ժողովրդեան և թէ Ակեղեցական պաշտօնէից մէջ բարոյական բարւոք յարաբերութեան և ջանից մի առիթ ևս կը մնայ:

պղտոր և հարազատ ուսմամբք և կրթութեամբք պատրաստելով կարգիւնաւորուին, որով մի պատառ հաց հայթայթելոյ միջոցը ևս ի միասին անշուշտ պիտի մատակարարուի:

Արեւմտեան ջանամբք փորձառու և Հայոց Ազգի և Ակեղեցւոյ նպաստաւոր և օգտատու խնդիրներ յուզելով զբազուիլ, և այն խնդիրները ևս պէտք է յուզել առանց կրից և յարձակմանց, որպէս զի կարելի լինի մտադրեալ բուն նպատակին հասնել և արգիւնքը վայելիլ:

Իսկ սոցա հակառակ վարուող և գործողաց կամ պէտք է յիշատել լինելը մակարերել, և կամ վարչեալ և ուրախեալ իմբեակէն լինելը կասկածել և հաւատալ: Աւ այսպիսի պարագայից մէջ՝ Հայ Ազգի օգտին նուիրեալ և ջանացող լրագիրք և խմբագիրք ևս պիտի ուշադրութիւն տան և զգուշանան: Ապա թէ ոչ՝ զանցառուք ևս մի և նոյն բարոյական դատապարտութեան ենթարկուելոյ արժանի կը համարուին:

Օ, օգուտն ձեր դուք զիտէք:

Վ. Վ. ՄԱՆԿՈՒՆԻ

